բերող խնդիրների նորովի քննարկման անհրաժեշտութեան հարցը: Դրանք են.

ա) Արդեո՞ք հէնց Սմբատ Բագրատունին չէր «Պարսից ժողովից» յետոյ դարձել առաջին «Հայոց իշխան»-ը (ինչպէս Վարազ-Գրիգորն էր դարձել «առաջին Աղուանից իշխան»-ը Վիրոյի միջնորդութեամբ, ով այլ յարմար պահ չէր կարող ունենալ արքայի առջեւ նման միջնորդութիւն անելու, քան «Պարսից ժողովն» էր): Բանն այն է, որ գրականութեան մէջ (Եր. Տէր-Մինասեան եւ ուրիշներ) հիմնաւոր փաստարկուած է համարւում այդ պաշտօնում Սմբատի չլինելը, սակայն՝ Հայ եւ Վրաց եկեղեցիների բաժանման տարիներին՝ 607-609 թթ., երբ նա «Վրկանի մարզպան» էր: Իսկ 610-ական թթ. կէսերին քաղաքական լրջագոյն փոփոխութիւններ էին տեղի ունեցել, եւ «Վրկանի մարզպանի» պաշտօնն էլ, հաւանաբար, ցմահ չէր: Նկատենք, որ Սեբէոսը եւ աւելի ուշ աղբիւրներ ուղղակի նշում ունեն Սմբատի որդու՝ Վարազտիրոց Բագրատունու կողմից Հայոց իշխանի պաշտօնն՝ իբրեւ «ամենից արժանաւոր» թեկնածու ստանձնելու մասին, իսկ այդ «արժանաւորութեան» մէջ հնարաւոր է ենթադրել հէնց ինչ-որ իմաստով ժառանգականութեան գործօնը: Ուշադրութեան առնենք նաեւ Յովհան Մամիկոնեանի պատումը «արժանաւոր» «Հայոց իշխան» Տիրանի մասին[1], որպիսի անուան տակ, մեր կարծիքով, ընկալելի է Վարազտիրոցը (հմմտ. Տիրան - Տիրոց):

բ) Արդեո՞ք «Պարսից ժողովի» համատեքստում միաբնակութեանը չէր վերադարձուել նաեւ Վրաց եկեղեցին՝ բնականաբար, ժամանակաւորապէս եւ, յատուկ նշենք՝ ստիպողական տարբերակով: Վերջինը հէնց այն տարբերակն է, որը բառացի հնարաւոր չէր համարում կիրառել Սմբատ Բագրատունին 600-ական թթ. (Մովսէս Յուրտաւեցի եպիսկոպոսին ուղղուած վերջին նամակում սրտնեղելով՝ «Հո չե՞մ կարող սրի քաշել այդ ամբողջ ժողովրդին»)[2], երբ, շեշտենք, բոլորովին այլ էր պարսկա-բիւզանդական ուժերի յարաբերակցութիւնը: Չէ՞ որ, ինչպէս նկատել է դեռեւս Ս. Երեմեանը, «Աշխարհացոյց»-ում Վրաց աշխարհ-շահրի նշանաւոր սրբավայրերը, օր.՝ Մցխիթայի խաչը, ներկայացուած են լիովին դրական լոյսով, այն դէպքում, երբ 609 թ. Աբրահամ Աղբաթանեցին, ի վերջոյ, նզովքի սպառնալիքով արգելեց իր հօտին ուխտի գնալ այնտեղ: Ի դէպ, ուսումնասիրողն այդ հիմքով էր «Աշխարհացոյց»-ի ստեղծումը թուագրում 609/610 թ. նախորդող ժամանակով, որն, այսպիսով, պիտի համարուի վերապահելի:

«Աշխարհացոյց»-ի՝ նման, փաստօրէն՝ ուղիղ վկայութեանը կարելի է յաւելել հայ եւ վրաց մատենագրական երկերի (այդ թւում՝ վերը նշուած «Վիրոյ կաթողիկոսի պատմութեան») անուղղակի տուեալներն այն մասին, թէ ինչ անողոքութեամբ էր 626-627 թթ. Հերակլ կայսեր լեգէոնների ու նրա դաշնակից թիւրքիւտների (վրացական երկում՝ խազարների) հրոսակների դէմ մարտնչում Տփղիսի ամրոցում շրջապատուած «Քարթլիի էրիսթաւ» Ստեփանոզ-Ստեփանէն[3] (հայկական երկում՝ «տեղացի Վրաց իշխանը»): Իսկ դեռեւս Անտիոքոս Ստրատեգոսի երկին նուիրուած իր մենագրութեան մէջ ակադ. Նիկ. Մառը ցոյց է տուել, որ Հերակլ կայսեր նկատմամբ դրական կամ բացասական (անգամ՝ իներտ) վերաբերմունքից կարելի է որոշել հայ եւ վրացի մատենագիրների ու նրանց հերոսների՝ երկաբնակ կամ հակաքաղկե-

1 **Յովհան Մամիկոնեան**, *Պատմութիւն Տարաւնոյ*, Հրատ. **Ա. Յակոբեան**, – «Մատենագիրք Հայոց», հտ. Ե, Անթիլիաս, 2005, էջ 1122-1124:

2 **Սմբատ Բագրատունի**, *Թուղթք* [3], Հրատ. **Պ. Մուրադեան**, **Ա. Յակոբեան**, – «Մատենագիրք Հայոց», հտ. Դ, Անթիլիաս, 2005, էջ 340:

3 **Джуаншер Джуаншериани**, *Жизнь Вахтанга Горгасала*, Пер., введение и примечания **Г. В. Цулая**, Тбилиси, 1986, էջ 99-100; *Քարթլիս ցխովրեբայի կամ Վրաց պատմութեան հին հայերէն թարգմանութիւնը*, Վրացերէն բնագիրը եւ հին հայերէն թարգմանութիւնը ուսումնասիրութեամբ եւ բառգրքով լոյս ընծայեց **Ի. Աբուլաձէն**, Թբիլիսի, 1953, էջ 189-190: